

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը լիազորված է խոր վշտով հայտնելու, թե սույն թվի հունիսի 10-ի լույս 11-ի գիշերը Մայր տաճարի թանգարանից գողացված են 25 թանգարանային եկեղեցական իրեղեններ՝ մեծավ մասամբ ֆիլիգրամ աշխատված խաչեր, այդ թվում նաև Աջերը Մծբնա սուրբ Հակոբ Հայրապետի (Երկրորդ Աջը) և սուրբ Արիստակես կաթողիկոսի, բոլորը արծաթոսկեջրած, ոմանք զարդարված ոչ թանկարժեք գունավոր քարերով:

Մեր երկրի պատկան իշխանությունները առաջին իսկ օրից սկսյալ մինչև այսօր, ամենայն սրտցավությամբ իրենց կարելին ի գործ են դնում հայտնաբերելու համար չարագործներին և Մայր Աթոռիս վերադարձնելու գողացված վերոհիշյալ նվիրական իրեղենները:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

23-ը օգոստոսի 1973 թ.,
Ս. Էջմիածին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Բեյրութում լույս է տեսել Սիմոն Հովիվյանի «Սրտբաց խոստովանություններ» գիրքը, որը Մայր Աթոռիս, հոգևոր ճեմարանի և մայրավանքի պաշտոնեության հասցեին ուղղված զրպարտությունների, ինչպես նաև մայր հայրենիքի մասին վատաղողջ դատումների մի անխիղճ շարադրանք է:

Մայր Աթոռս իր վրդովմունքն է արտահայտում և խստորեն դատապարտում հեղինակի անազնիվ և ոչնչով չարդարացվող վարքագիծն ու գործունեությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

17-ը օգոստոսի 1973 թ.,
Ս. Էջմիածին